

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային
հետազոտությունների կենտրոնի
տնօրեն՝ Լ.Վ. Սահակյան



ԿԱՐՄԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սերգեյ Արթուրի Կտրակյանի Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Երևանի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի հարստացման և գեղազարդության բարձրացման խնդիրները» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Քաղաքային էկոհամակարգերի անբաժան մասն են կազմում կանաչ տարածքները, որոնք իրականացնում են բազմաթիվ գործառույթներ՝ հազեցնում են օդը թթվածնով, նվազեցնում են տարբեր վնասակար նյութերով միջավայրի աղտոտվածությունը, մեղմացնում են կլիմայական պայմանները, պաշտպանում են քամուց, աղմուկից և արևի ճառագայթներից, գեղազարդություն են պարզևում տարածքի կառուցապատմանը և այլն: Միաժամանակ քաղաքային բույսերը ենթարկվում են մարդածին տարբեր գործոնների ազդեցության, վնասվում են և կորցնում իրենց հիմնական գործառույթները, ի վերջո կրճատվում են կանաչ տարածքները: Ներկայումս քաղաքներում տարեց տարի աճում են էկոլոգիական խնդիրները, որոնց լուծման ամենաարդյունավետ միջոցներից է գիտականորեն հիմնավորված և միջազգային նորմերին համապատասխանող քաղաքային տարածքների կանաչապատումումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կտրակյան Սերգեյ Արթուրի կողմից ներկայացված ատենախոսությունը նվիրված է Երևանի համար կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցի՝ քաղաքի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի հարստացման խնդիրների լուծմանը: Վերջին տասնամյակների ընթացքում Երևանի կանաչ տարածքները խիստ կրճատվել են և չեն համապատասխանում ընդունված նորմերին: Պատճառ են հանդիսացել մեծածավալ ծառահատումները և շինարարությունը, միջավայրի աղտոտվածությունը տարբեր

վնասակար նյութերով, տրանսպորտային միջոցների ավելացումը, կլիմայական պայմանների փոփոխությունները, հողերի դեգրադացիան և այլն: Այս պայմաններում չափազանց արդիական է դառնում կանաչ տնկարկների ավելացման և ծառափային բույսերի տեսականու ընտրության խնդիրների լուծումը, ինչին և նվիրված է ներկայացված գիտական աշխատանքը:

*ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ, ՁևԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ,
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԴՐԱՆՑ
ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ*

Ս.Կտրակյանի կողմից ներկայացված աշխատանքի նպատակն է եղել գնահատել Երևանի կանաչապատման ներկա վիճակը, բացահայտել առկա խնդիրները և առաջարկել բավարար հարմարողականությամբ օժտված բարձր գեղազարդությամբ ծառափատեսակներ՝ քաղաքի կանաչապատման պրակտիկայում կիրառելու համար: Հեղինակը իրականացրել է բավականին ծավալուն հետազոտություն. ուսումնասիրել է Երևան քաղաքի կանաչ տնկարկների վիճակը և բաշխվածությունը ըստ վարչական շրջանների և բնակելի միկրոշրջանների, կատարել է գիտական գույքագրում մայրաքաղաքի բոլոր տիպի և կատեգորիայի կանաչ տնկարկներում՝ բացահայտելու և վերլուծելու առկա ծառերի ու թփերի տաքսոնոմիական կազմը, գնահատել է քաղաքի կանաչ տնկարկներն՝ ըստ գեղազարդության հատկանիշների, կատարել է համեմատական վերլուծություն կանաչ տնկարկներում ներմուծված և աբորիգեն ծառաբույսերի առկայության և օգտագործման համամասնության վերաբերյալ և ամփոփելով հետազոտության արդյունքները՝ մշակել է գործնական առաջարկներ մայրաքաղաքի կանաչ տնկարկների գեղազարդության բարձրացման, ինչպես նաև առավել բարձր գեղազարդ և էկոլոգիապես ճկուն տեսակների օգտագործման վերաբերյալ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է հեղինակի կողմից կատարված Երևան քաղաքի տարբեր տիպի և կատեգորիայի կանաչ տնկարկներում առավել հաճախ հանդիպող 64 ծառափատեսակների գեղազարդության և պիտանիության գնահատման և քաղաքի կանաչ տնկարկներում օգտագործվող տեսակների դենդրոկազմի էկոլոգո-աշխարհագրական վերլուծության հիման վրա տրված դրանց հեռանկարայնության գնահատականի մեջ: Ս.Կտրակյանի կողմից մշակվել է ծառաբույսերի առավել գեղազարդ և էկոլոգիապես բարձր հարմարողականությամբ օժտված տեսակաշար: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակի կողմից առաջարկվող ծառաբույսերն օգտագործվում են խիստ հազվադեպ կամ դեռևս չեն կիրառվում Երևանի կանաչապատման պրակտիկայում: Ներկայացված ատենախոսությունում գիտական դրույթները և եզրակացությունները, ինչպես նաև ընտրված թեմայի հիմնավորումը քննարկված է բավարար աստիճանով: Հետազոտության արդյունքները հավաստի են,

քանի որ դրանք հիմնված են ընդունված մեթոդների կիրառմամբ մեծաքանակ տվյալների վերլուծության վրա:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Ս.Կտրակյանի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ Երևանի կանաչ տարածքների գեղազարդ տնկարկների ավելացման, դրանց դենդրոկազմի հարստացման ու բարելավման, ինչպես նաև գեղազարդության բարձրացման և մի շարք այլ խնդիրների լուծման համար: Առաջարկվող 56 տեսակի ծառափեղերը կարող են օգտագործվել քաղաքի կանաչապատման պրակտիկայում ըստ ֆունկցիոնալ նշանակության: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի կանաչ տարածքները ներկայումս խիստ կրճատված են և կարիք ունեն բարեփոխումների, հեղինակի կողմից ներկայացված բոլոր առաջարկությունները արժեքավոր են և ներդրման կարիք ունեն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից և գրականության ցանկից: Աշխատանքը պարունակում է 11 աղյուսակ, 35 նկար, 7 գրաֆիկական պատկերներ և 1 քարտեզ: Ատենախոսության տեքստը կազմում է համակարգչային 135 էջ, օգտագործված գրականության ցանկը՝ 93 անուն: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են հեղինակի անհատական և համատեղ 6 հոդվածներում: Անհրաժեշտ է նշել, որ ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված և ձևակերպված են գրագետ և բավարարում են գիտական աշխատություններին ներկայացված պահանջներին:

Աշխատանքի վերաբերյալ կան որոշ դիտողություններ.

1. Ատենախոսության մեջ հեղինակը քիչ է անդրադառնում Երևանի մթնոլորտի և հողերի աղտոտվածության մակարդակի և առանձնահատկությունների վերաբերյալ տվյալներին, մինչդեռ դրանք հանդիսանում են քաղաքային տարածքներում աճող բույսերի վրա ազդող կարևոր գործոններ, իսկ Երևանի էկոլոգիական իրավիճակի և քաղաքում աճող ծառատեսակների ֆիտոֆիլտրացիոն հատկությունների և էկոլոգիական կայունության վերաբերյալ կան բավականին շատ տպագրված աշխատանքներ, որոնց մասին հեղինակը չի նշում:

2. 4-րդ գլխում (էջեր 30-31) բերված են տվյալներ Երևանի հողերի և մթնոլորտի ծանր մետաղներով աղտոտվածության վերաբերյալ, բայց չկա հղում նյութի աղբյուրի վերաբերյալ, ինչպես նաև էջ 46-ում խոսվում է բույսերի վրա էկոլոգիական գործոնների ազդեցության մասին, բայց նույնպես չեն նշվում տեղեկատվության աղբյուրները:

3. Գլուխ 4-րդում բերված աղյուսակներում (էջեր 33 և 35) ներկայացված տվյալների վերլուծության մեջ նկատվում է հակասություն՝ աղյուսակ 3-ի տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարչական շրջաններից Ավանը և Դավիթաշենը աղքատ են կանաչ տարածքներով, իսկ աղյուսակ 4-ի տվյալների վերլուծության ժամանակ հեղինակը նշում է, որ այդ շրջանները, մասնավորապես Դավիթաշենը, համեմատաբար ապահովված են կանաչ տնկարկներով:

4. Աշխատանքում առկա է միայն մեկ քարտեզ. Գլուխ 4-րդում բերված Քարտեզ 1-ում ներկայացվում է առկա և անհրաժեշտ կանաչապատ տարածքների համեմատական ցուցանիշները Երևան քաղաքի համար: Աշխատանքը կշահեր, եթե օրինակ, 4-րդ գլխի աղյուսակ 3-ում ներկայացված Երևան քաղաքում կանաչապատ տարածքների բաշխվածությունը ըստ վարչական շրջանների ներկայացվեր քարտեզագրական եղանակով ևս: Աշխատանքում ժամանակակից Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաների (GIS) կիրառմամբ հարստացված քարտեզագրական նյութը կբարձրացներ ներկայացվող նյութի վիզուալ ընկալումը՝ աշխատանքին հաղորդելով «տեխնոլոգիական թարմություն»:

5. Հեղինակի կողմից մշակված և օգտագործված գրականության ցանկի մեջ գրեթե բացակայում են հետազոտվող թեմայով արտասահմանյան (բացի ռուսական հոդվածներից) գիտական հրապարակումները, հատկապես վերջին տարիների:

6. Հեղինակի կողմից տրվել են արժեքավոր գործնական առաջարկություններ, սակայն կանաչապատման համար նոր տեսակներ ներմուծելիս պետք է լավ ուսումնասիրել և հաշվի առնել ոչ միայն դրանց պոտենցիալը ինվազիվ լինելու տեսանկյունից, այլ նաև հաշվի առնել կանաչապատվող տարածքի (հողի և մթնոլորտի) աղտոտվածության մակարդակը և առանձնահատկությունները, ինչպես նաև բուսատեսակների ֆիտոֆիլտրային հատկությունները և էկոլոգիական կայունությունը՝ տվյալ տարածքի աղտոտիչների նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված թերությունները բոլորովին չեն նվազեցնում ներկայացված աշխատանքի արժեքը: Մ. Կտրակյանի կողմից իրականացված հետազոտությունը շատ կարևոր և արդիական է Երևան քաղաքի համար, պարունակում է արժեքավոր եզրակացություններ և գործնական առաջարկություններ: Հետազոտությունը իրականացնելիս աստենախոսը ցուցաբերել է դիտարկվող հարցերի իմացություն, խնդիրները ձևակերպելու և լուծելու մասնագիտական պատրաստվածություն և վերլուծական բավարար մակարդակ: Աստենախոսության սեղմագիրը և 6 հրատարակված աշխատությունները արտացոլում են աշխատանքում առկա հիմնական դրույթները:

Ս.Ա.Կտրակյանի «Երևանի կանաչ տնկարկների ղեկըրոֆլորայի հարստացման և գեղագարդության բարձրացման խնդիրները» թեմայով ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Գ.00.05 - «Բուսաբանություն, սնկաբանություն, Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել և կարծիքը հաստատվել է 15.06.2020թ-ին՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների գիտական խորհրդի թիվ 9 նիստում: Նիստին մասնակցել են ՀՀ ԳԱԱ Էկոկենտրոնի տնօրեն, գիտ խորհրդի նախագահ ա.գ.թ. Լ.Սահակյանը, գիտ. քարտուղար կ.գ.թ. Ն. Մաղաքյանը, գիտ. խորհրդի անդամներ ա.գ.թ. Շ. Ասմարյանը, գ.գ.դ. Բ. Մեժունցը, ս.գ.դ. Դ. Պիպոյանը, կ.գ.թ. Գ. Տեփանոսյանը, կ.գ.թ. Օ. Բեյլանան, կ.գ.թ. Հ.Հովհաննիսյանը, ա.գ.թ. Վ. Մուրադյանը և տ.գ.թ. Մ. Բեգլարյանը:

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի

գիտ. գծով փոխտնօրեն, Աշխարհագրական տեղեկատվական
համակարգերի և հեռազննման բաժնի ղեկավար,
աշխ.գիտ.թեկնածու

Շ.Գ.Ասմարյան

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի
առաջատար գիտաշխատող,
կենս.գիտ.թեկնածու

Հ.Ա.Հովհաննիսյան

Շ.Գ.Ասմարյանի և Հ.Ա.Հովհաննիսյանի ստորագրությունները հաստատում են՝
գիտ. քարտուղար, կենս.գիտ.թեկնածու

Ն.Ռ.Մաղաքյան